



ԻՄ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հեշտ ընթերցվող տարբերակ

Այս գրքույկը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Մենք կարող ենք» ՀԿ-ն ի դեմս Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիան, և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Ծրագիրն իրականացվում է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի կողմից՝ ի դեմս Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի:

Տեղեկատվական գրքույկը մատչելի դարձրեց Արմինե Սահակյանը:



ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Ինչ է Սահմանադրությունը.

Սահմանադրությունը պետության հիմնական օրենքն է: Սահմանադրությունը սահմանում է պետության կառուցվածքը, կառավարման համակարգը, ընտրական համակարգը, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները:



ԻՐԱՎՈՒՆՔԸ. Ինչ է իրավունքը.

Բոլոր մարդիկ ունեն իրավունքներ: Մարդու իրավունքներ ունենալու համար պետք չէ ոչինչ անել: Դրանք ունենք, քանի որ մարդ ենք: Մարդու իրավունքները կանոններ են, որոնք պաշտպանում են մեզ:



ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Ինչ է պատասխանատվությունը.

Պատասխանատու լինել, նշանակում է քո արարքների համար պատասխան տալ, հաշվետու լինել:



ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. Ինչ է նշանակում պարտականություն.

Մարդն ունի նաև պարտականություններ: Մենք պետք է անենք այն, ինչ մեզանից պահանջվում է օրենքով, ընդունված կանոններով: Օրինակ՝ Եթե դու սովորում ես դպրոցում, կամ քոլեջում, դու պետք է պարտաճանաչորեն հաճախես դասերին, կատարես ուսուցչի առաջադրանքները:



ՕՐԵՆՔ

Օրենքը փաստաթուղթ է, որտեղ գրված է, թե ինչ պետք է անի կառավարությունը մեր իրավունքները պաշտպանելու համար:

ԿՈՆՎԵՆՑԻԱ Ի՞նչ է նշանակում կոնվենցիա



Կոնվենցիան միջազգային պայմանագրի տեսակ է: Պետությունները ստորագրում են կոնվենցիաներ և պարտավորվում են վարվել այնպես, ինչպես գրված է այդ կոնվենցիաներում: Կան տարբեր կոնվենցիաներ՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա

Այս կոնվենցիան ընդունած պետություններում հաշմանդամություն ունեցող անձինք պետք է բոլորի նման ունենան նույն իրավունքները: Պետությունները ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք հավասարապես պաշտպանված լինեն:



Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին օրենք



«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին օրենքը» հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց մասին է. Օրենքն ասում է, որ հաշմանդամություն ունեցող մարդկանց պետք է հարգենք:

Մենք պետք է սովորենք, աշխատենք և ապրենք միասին, ոչ թե առանձին:

Կրթություն



Բոլոր մարդիկ ունեն կրթություն ստանալու իրավունք:

Բոլոր երեխաները պետք է գնան հանրակրթական դպրոց: Հաշմանդամություն ունեցող և չունեցող աշակերտները պետք է միասին սովորեն, մասնակցեն դպրոցական միջոցառումներին:

Եթե հաշմանդամություն ունեցող անձը ուզում է մասնագետ դառնալ, նա կարող է սովորել քոլեջում, համալսարաններում:

Խտրականություն



«Խտրականություն հաշմանդամության հիմքով» նշանակում է, որ այդ մարդու նկատմամբ տարբերակված վերաբերմունք են ցույց տալիս կամ չեն թողնում որևէ բան անել՝ իր հաշմանդամության պատճառով:

Մատչելի տեղեկատվություն



Հեռուստատեսային հաղորդումները, լուրերը, քարոզարշավները պետք է լինեն մատչելի: Եթե մարդը ունի լսողության խնդիրներ, հաղորդումները պետք է լինեն նաև ժեստերի լեզվով կամ լուսագրերով: Լուսագրեր ենք անվանում այն, ինչ կարելի է տեսնել էկրանի ներքևի հատվածում: Այն ինչ բարձրաձայնում են, դա գրվում է տեքստային տարբերակով: Ժեստերի լեզուն մարմնի շարժումների, հատկապես ձեռքերի միջոցով հաղորդակցվելու լեզու է, որն օգտագործվում է խուլ կամ լսողության խնդիրներ ունեցող մարդկանց կողմից:

Եթե մարդը ունի գրելու, կարդալու դժվարություններ, պետք են հեշտ ու պարզ ընթերցվող նյութեր, նկարների և նշանների միջոցով գրքեր, ցուցանակներ:

Անկախ ապրել և ներառվել համայնքում



Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունք՝ ինչպես բոլորը:

Անկախ ապրել չի նշանակում, որ անպայման մենակ պետք է ապրեք և ամեն ինչ ինքնուրույն անեք: Անկախ ապրել նշանակում է, որ դուք եք որոշում որտեղ ապրել, ինչպես, ում հետ: Եթե օգնության կարիք ունեք, օրինակ՝ հագնվելու, տնային գործեր անելու, կարևոր որոշումներ կայացնելու՝ ձեզ պետք է օգնեն: Կարող են օգնել ընտանիքի անդամները: Կարող եք դիմել նաև այն մարդուն, ում վստահում եք: Նրանք չպետք է որոշեն ձեր փոխարեն, այլ պետք է հաշվի առնեն ձեր ցանկությունները: Մարդիկ չպետք է ապրեն փակ հաստատություններում: Բոլորը պետք է հնարավորություն ունենան ապրել համայնքում:



Անձնական օգնական

Անձնական օգնականը այն մարդն է, ում դուք վստահում եք: Եթե դուք դժվարանում եք ինքնուրույն հագնվել, դեղերը ընդունել, գնալ ինչ-որ մի տեղ, ապա անձնական օգնականը օգնում է Ձեզ:

Խելամիտ հարմարեցումներ

Դրանք կոնկրետ մեկ մարդու համար արվող փոփոխություններ են, որոնք նպաստում են, որ հաշմանդամություն ունեցող տվյալ անձը դժվարություններ չունենա դպրոցում, աշխատանքի վայրում: Եթե հրաժարվում են Ձեզ համար խելամիտ հարմարեցումներ տրամադրել, ապա դա նույնպես խտրականություն է:

Օրինակ՝

Մարդը գնացել է աշխատանքի, բայց չի կողմնորոշվում, ինչպես գնա այն աշխատասենյակ, որտեղ ինքն աշխատում է: Նրան պետք են նկարներով ուղորդող ցուցանակներ, որպեսզի գտնի իր աշխատասենյակը:



Աշակերտը ունի լսողության խնդիրներ:

Դասարանում նրան խելամիտ հարմարեցումներ են պետք:

Օրինակ՝

Նա պետք է նստի առաջին շարքում: Սենյակը պետք է լուսավոր լինի, որպեսզի նա տեսնի ուսուցչի շրթունքները և ավելի լավ հասկանա, թե ինչ է ուսուցիչը ասում:

Ինտերակտիվ երկխոսություն



Ինտերակտիվ երկխոսությունը զրույց է, որին մասնակցում են հաշմանդամություն ունեցող անձը և գործատուն: Այդ զրույցի ժամանակ հաշմանդամություն ունեցող անձը ասում է, թե ինչ է իրեն պետք, որպեսզի կարողանա գալ աշխատանքի և աշխատել:

Ինտերակտիվ երկխոսությունից առաջ, անձը պետք է դիմում գրի և ներկայացնի գործատուին: Դիմումի մեջ պետք է նշի, թե ինչ խելամիտ հարմարեցում է իրեն պետք: Եթե անձը համաձայն է, ինտերակտիվ երկխոսությանը կարող է մասնակցել նաև իր անձնական օգնականը:

Բուլինգ



Երբ մի քանի հոգի անընդհատ ծաղրում են մարդուն, կոպիտ ու տհաճ կատակներ են անում, դա կոչվում է բուլինգ: Մարդուն բուլինգի կարող են ենթարկել մարդկանց փոքր խումբը, ամբողջ դասարանը կամ ուսուցիչը:

Բուլինգի առավել հաճախ ենթարկվում են մարդիկ, ովքեր ունեն տարբերվող արտաքին, ովքեր դժվարանում են սովորել, հաշմանդամություն ունեն:


Բուլինգի կարող են ենթարկվել, անգամ եթե լավ են սովորում:

Բուլինգը կարող է ունենալ լուրջ հետևանքներ: Բուլինգի ենթարկվողը մեղավոր չէ, որ հայտնվել է նման իրավիճակում:

Եթե Դուք ենթարկվել եք բուլինգի, ապա տեղեկացրեք ծնոնդերին, ուսուցչին, տնօրենին կամ այն մարդուն, ում վստահում եք:

Բռնություն. Ինչ է բռնությունը

Կյանքում կան բարի, լավ և հակառակը՝ չար, վատ մարդիկ: Վատ մարդիկ կարող են հաշմանդամություն ունեցող անձանց բռնության ենթարկել, օրինակ՝ ծեծել, ցավ պատճառել, իրենց կամքին հակառակ դիպչել, գրկել: Լինում են նաև դեպքեր, երբ մարդուն թույլ չեն տալիս գնալ դպրոց, շփվել մարդկանց հետ:



Մարդուն կարող են բռնության ենթարկել հիվանդանոցում, վերականգնողական կենտրոնում, խնամքի տներում, տրանսպորտում, նույնիսկ՝ տանը:

Եթե բռնության ես ենթարկվել, կարող ես դիմել իրավապաշտպան հասարակական կազմակերպություն, ոստիկանի կամ մարդու, ում վստահում ես:

Առողջություն

Բոլոր մարդիկ ունեն առողջ լինելու իրավունք: Յուրաքանչյուր մարդ ունի բժշկական օգնություն ստանալու իրավունք:



Մարդը կարող է ընտրել այն բժշկին, ում վստահում է:

Մարդը իրավունք ունի իմանալ իր հիվանդության մասին:

Մարդը կարող է հրաժարվել բժշկական միջամտությունից:

Երբ շտապ բժշկի կարիք ունեք, պետք է զանգահարեք 1 03 հեռախոսահամարով:

Երբ բժիշկը հրաժարվում է մեզ բժշկական օգնություն ցույց տալ, երբ բժիշկները մեզ վատ են վերաբերվում, պետք է տեղեկացնել Առողջապահության նախարարությանը, զանգահարել թե՛ժ գծի համարով:



Մարդկանց պաշտպանությունը պատերազմի ժամանակ

Ցավոք աշխարհում լինում են նաև պատերազմներ: Երբ պետությունները չեն կարողանում պայմանավորվել իրենց հարցերի շուրջ, հաճախ սկսում են պատերազմել:



Օդային տազնապ

Պատերազմի ժամանակ կարող է հնչել «օդային տազնապ»: Դա 3 րոպե տևող ձայնային ազդանշան է: Ուշադիր եղեք նաև հեռախոսի հաղորդագրություններին կամ միացրեք հեռուստացույցը՝ լուրեր նայելու համար: Օդային տազնապի մասին ձեր հեռախոսին հաղորդագրություն կգա:



Աղետի ճամպրուկ

Երբ երկրում պատերազմ է, պետք է պատրաստել մի ճամպրուկ կամ պայուսակ: Պայուսակում պետք է դնել հագուստ, ջուր, 3 օրվա համար սնունդ, անձնագիրը: Եթե դեղեր եք օգտագործում, պայուսակում դրեք նաև ձեր դեղերը:


Ինչ պետք է անել օդային տագնապի ժամանակ

Երբ հնչում է օդային տագնապի ձայնը, խուճապի պետք չէ մատնվել: Անջատեք գազը, էլեկտրականությունը, ջուրը:



Վերցրեք ձեզ հետ նախօրոք պատրաստած պայուսակը: Հնարավորինս արագ մոտեցեք ձեզ ամենամոտը գտնվող գետնանցում, մետրո կամ նկուղ:

Երբ հնչել է օդային տագնապ, և դուք դրսում եք, կարող եք պատսպարվել ցածր ցանկապատի հետևում: Կամ հնարավորինս արագ գնացեք մոտակա գետնանցում, մետրոյի կայարան: Շենքերի պատերից հեռու մնացեք, շենքը կարող է փլվել:



Տարհանում

Պատերազմի ժամանակ հնարավոր է նաև տարհանում: Այսինքն՝ մարդկանց տեղափոխում են մեկ այլ վայր, որտեղ ավելի ապահով է:

Մասնակցություն քաղաքական և հասարակական կյանքին

Հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար իրավունք ունեն մասնակցելու քաղաքական կյանքին:

Պետությունը պետք է ապահովի, որ ընտրությունները լինեն մատչելի: Ազգային ժողովի պատգամավորներին ընտրում են 18 տարին լրացած, անձնագիր ունեցող քաղաքացիները:

Մտավոր խնդիրներ ունեցող անձինք ևս ունեն ընտրելու իրավունք:

Ընտրել չեն կարող միայն այն մարդիկ, որոնց դատարանը ճանաչել է անգործունակ:

Եթե չեք կարողանում ինքնուրույն ընտրել, կարող եք խնդրել, որ ձեզ օգնեն:

Հաշմանդամություն ունեցող անձինք կարող են ընտրվել պատգամավոր:

Քաղաքական գործիչների խմբերին անվանում ենք կուսակցություններ:

Կուսակցությունները ընտրություններից առաջ ներկայացնում են պատգամավորի թեկնածուների ցուցակները: Այդ ցուցակում այն մարդիկ են, որոնք կդառնան պատգամավոր, եթե ընտրեք այդ կուսակցությունը:

Կուսակցությունների ծրագրերին կարող ես ծանոթանալ ինտերնետով, ռադիոյի, հեռուստատեսության, հանդիպումների միջոցով: Հանդիպումների ընթացքում դու կարող ես տալ քո հարցերը քաղաքական գործիչներին:

Ցանկալի է, որ մասնակցեք ընտրություններին: Դու կարող ես որոշել, թե Ազգային ժողովում կամ քո համայնքում առաջիկա տարիներին ովքեր ներկայացնեն քո խնդիրները:



Օգտագործված Գրականություն.

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա
Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՀՀ օրենք
Հայաստանի հանրապետության կառավարության որոշում՝ Խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը սահմանելու մասին

<https://election.aregak.online/> հավելված
<https://right.aregak.online/> հավելված

coalition.cilr@gmail.com 

+374 94043142 

Web



Facebook

